[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
11	Apրիլ	2019 թ.		Ա	8067474909
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
25	Փետրվար	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի		
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8	
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ	
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1	
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ	N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2.	
[13] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի		
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3	
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը		
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[19] Լրացուցիչ տվյալներ		
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր: Համար	
	Լիազորագիր: Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծանրաբեռնվածությունը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	18105518 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

11/04/2019 12:28:02

Ա.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ստացիոնար դատահոգեբանական և դատահոգեբուժական
համալիր փորձաքննություն նշանակելու մասին

Գ. Գյումրի

« 20 » օգոստոսի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Շ.Վ.Իկիլիկյանս, քննարկելով վարույթիս թիվ 18105518 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի օգոստոսի 13-ին ժամը 21:00-ի սահմաններում Հովհաննես Վարդիվարի Յանգնյանը գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, ընկերուհու՝ Արփենիկ Ռոբերտի Ղազարյանի փաստացի բնակության վայր հանդիսացող Գյումրի քաղաքի Մենդելևի փողոցի 14 տանը Արթուր Միխայլովիչ Կաբացիյին ապօրինի կյանքից զրկելու՝ սպանելու դիտավորությամբ էլեկտրական ջեռուցիչով մի քանի անգամ հարվածել է վերջինիս գլխին, այնուհետև խոհանոցային դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա կրծքավանդակի աջ կեսին՝ գանգուղեղային վնասվածքի, գանգի ոսկրերի կոտրվածքի, կրծքավանդակի աջ կեսի բազմաթիվ չթափանցող կտրած-ծակած վերքերի, կոմայի ձևերով պատճառելով մարմնական վնասվածքները, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ դեպքից հետո շտապ բուժօգնության աշխատակիցների կողմից Արթուր Կաբացիյը տեղափոխվել է «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն և ցուցաբերվել անհրաժեշտ բուժօգնություն:

Փաստի առթիվ 2018 թվականի օգոստոսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 18105518 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

2018 թվականի օգոստոսի 14-ին ժամը 01:15-ին Գյումրի քաղաքի Գրիբոյեդով փողոցի 6 տան բնակիչ, 07.12.1975թ. ծնված Հովհաննես Վարդիվարի Յանգնյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Հովհաննես Վարդիվարի Յանգնյանը 2018 թվականի օգոստոսի 13-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, ընկերուհու՝ Արփենիկ Ռոբերտի Ղազարյանի փաստացի բնակության վայր հանդիսացող Գյումրի քաղաքի Մենդելևի փողոցի 14 տանը, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, Արթուր Միխայլովիչ Կաբացիյի կողմից «Վոլկ» մականվամբ ոմն Արմենի հետ բջջային հեռախոսով բարձրախոսը միացված վիճակում զրուցելիս, ոմն Արմենի կողմից իր և Արփենիկ Ղազարյանի հասցեին հայհոյանքներ կատարելուց հետո հեռախոսազանգը չանջատելու առիթով Արթուր Կաբացիյին դիտողություն անելուց և վերջինիս կողմից հեռախոսազանգը անջատելու հարցում մերժում ստանալուց հետո, ապօրինի նրան կյանքից զրկելու՝ սպանելու դիտավորությամբ էլեկտրական ջեռուցիչով մեկ անգամ հարվածել է վերջինիս գլխին, ինչի հետևանքով նրա վայր ընկնելուց հետո, դիտավորությունն ավարտին հասցնելու նպատակով մի քանի անգամ ջեռուցիչով հարվածներ է հասցրել Արթուր Կաբացիյի գլխին, խոհանոցից վերցնելով դանակը, դրանով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրա կրծքավանդակի աջ կեսին՝ գանգուղեղային վնասվածքի, գանգի ոսկրերի կոտրվածքի, կրծքավանդակի աջ կեսի բազմաթիվ չթափանցող կտրած-ծակած վերքերի, կոմայի ձևերով պատճառելով մարմնական վնասվածքներ, և Արթուր Կաբացիյի գիտակցության կորստից հետո, մտածելով, որ հանցավոր մտադրությունն ավարտին է հասցրել, վեջինիս քարշ տալով տեղափոխել է տանը կից

ավտոտնակ և զանգահարել ոստիկանություն, սակայն իր կամքից անկախ հանգամանք-
ներով հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ Արթուր Կաբացիյը չի մահացել՝
դեպքից հետո շտապ բուժօգնության աշխատակիցների կողմից տեղափոխվել է «Գյումրի
բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն և ցուցաբերվել անհրաժեշտ բուժօգնություն:

2018 թվականի օգոստոսի 16-ին որոշում է կայացվել Հովհաննես Վարդիվարի
Յանգնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ
ներգրավելու մասին և նույն օրը վերջինիս առաջադրվել է մեղադրանք:

Առաջադրված մեղադրանքում Հովհաննես Վարդիվարի Յանգնյանը դիրքորոշում չի
հայտնել և օգտվելով իր դատավարական իրավունքներից հրաժարվել է ցուցմունք տալ և
որևէ հարցերի պատասխանել:

Ստուգմամբ պարզվել է, որ Հովհաննես Վարդիվարի Յանգնյանը 2018 թվականի օգոս-
տոսի 14-ից «Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, էմոցիոնալ-կամային անկայու-
նություն» ախտորոշմամբ հաշվառման մեջ է գտնվում «Գյումրի հոգեկան առողջության
կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական ծառայությունում:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ
են դատական հոգեբանության և դատական հոգեբուժության բնագավառների հատուկ
մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 18105518 քրեական գործով նշանակել ստացիոնար դատահոգեբանական և
դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ
կից միջգերատեսչական ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնա-
ժողովի փորձագետներին և Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական
համալսարանի հոգեբանության ամբիոնի հոգեբան փորձագետներին, նրանց նախազգու-
շացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական
պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

- Հանցավոր արարքը կատարելու պահին մեղադրյալ Հովհաննես Վարդիվարի
Յանգնյանը գտնվել է արդյոք հոգեկան խիստ հուզմունքի /ֆիզիոլոգիական աֆեկտի /
վիճակում, թե ոչ:

- Հանցավոր արարքը կատարելու պահին Հովհաննես Յանգնյանը գտնվել է արդյոք
այնպիսի հուզական վիճակում /հոգեկան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն,
սթրես և այլն/, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության
վրա:

- Մեղադրյալ Հովհաննես Յանգնյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք
կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի
հիվանդությամբ է տառապել և երբվանից:

- Եթե Հովհաննես Յանգնյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ
հիվանդությունը գրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք
ղեկավարելու ընդունակությունից:

- Հովհաննես Յանգնյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե
ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

- Եթե Հովհաննես Յանգնյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ
հիվանդությունը գրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու
և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Հովհաննես Յանգնյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

- Հովհաննես Յանգնյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

4. Միջնորդության դեպքում փորձաքննությանը ներկայացնել Հովհաննես Յանգնյանին, տրամադրել քրեական գործի նյութերը և Հովհաննես Յանգնյանին վերաբերյալ ամբուլատոր քարտը:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Շ.Իկիտիկյան